ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/201

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.12.2018թ. թիվ 27/26-3/22985-18 գրությամբ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 30.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9788 գրության հիման վրա, 11.12.2018թ. թիվ 27/26-3/22985-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Էդվարդ Փանոսյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Էդվարդ Փանոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանի կողմից դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Էդվարդ Փանոսյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/201 ընթացակարգի շրջանակներում 14.12.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ դատական դեպարտամենտը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9788 գրությամբ ներկայացրել է Ա/Ձ Էդվարդ Փանոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/201 ընթացակարգի շրջանակներում 14.12.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/48» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Էդվարդ Փանոսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանի կողմից ներկայացված հայտը (հայտում առկա փաստաթղթերը) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան՝ բացառությամբ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը (Հավելված 2), որը կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան (1-ին կետի «բ» ենթակետում լրացված չէ մասնակցի անվանումը):

Մասնակցին ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանի հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ Մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.12.2018թ. թիվ 27/26-3/22985-18 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 30.11.2018թ. թիվ ԴԴ-3-Ե-9788 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում,

գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ ***մասնակիցը*** կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը ***հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Կարգի 41-42-րդ կետերի համաձայն՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է;

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կազմակերպվել է «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/48» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Էդվարդ Փանոսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանի կողմից ներկայացված

հայտը (հայտում առկա փաստաթղթերը) կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան՝ բացառությամբ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը (Հավելված 2), որը կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան (1-ին կետի «բ» ենթակետում լրացված չի մասնակցի անվանումը):

Գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և ծանուցել Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանի հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ Մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին: Նշված հայտարարության օրինակելի ձևը սահմանվել է 2-րդ հավելվածով:

Ա/Ձ Էդվարդ Փանոսյանն իր կողմից ներկայացված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին հայտարարության «բ» կետում չի լրացրել Մասնակցի անվանումը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, առաջնորդվելով Կարգի 41-րդ կետի պահանջներով, ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Արձանագրում եմ, որ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, ուստի գտնում եմ, որ Մասնակիցը «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/48» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.12.2018թ. թիվ 27/26-3/22985-18 գրությամբ Ա/Ձ Էդվարդ Փանոսյանին (ՀՎՀՀ՝ 43115057) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Էդվարդ Փանոսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**